ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ-Ի ԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՎԱՐԻՉ-ՏՆՕՐԵՆ՝ ՎԱՍԵՄԱՇՈՒՔ ՏԻԱՐ ՎԱՀԱՆ ՄԱԼԵԶՅԱՆԻՆ

ՈՂՋՈՒՅՆ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Ձեր գրությունը ստացանք մեծ հապաղումով, որ և պատճառն է Մեր պատասխանի ուշացման։

Ուրախ ենք հաղորդելու Ձեզ, որ Մեր վաղեմի ցանկությունն է եղել, պատեհ առթիվ, ըստ արժանվույն գնահատականը տալ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության և նորա բազմերախտ Ղեկավարների ազգանվեր ու հայրենաշեն գործունեության, որ այժմ կատարում ենք Հայրապետական Կոնդակով, առիթ առնելով Միությանդ գեղեցիկ նախաձեռնությունը և աղնիվ գործունեությունը Հայ Սփյուռքի Մեծ Հայրենադարձի հաջողությունը ապահովելու համար։

Մեզ քաջ հայտնի է, որ Դուք տասնյակ տարիներ շարունակ, ինչպես Բարեգործականի լուսահոգի հիմնադիր Պողոս Նուբար Փաշայի օրով, նույնպես և հետագա տարիներին, Ձեր անսպառ եռանդը, կենդանի խոսքը, սուր գրիչը, քաղաքական իմաստությունը, կենսական փորձառությունը, վարչական ընդունակությունը, բարի կամքը, միով բանիվ Ձեր ողջ մտավոր-բարոյական ուժն ու կարողությունը, ազգային-քաղաքացիական առաքինությունները ի սպաս եք դրել Հայ Ազգի, Հայ Հայրենիքի, Հայ Եկեղեցու պահպանության ու պաշտպանության, հառաջադիմության և պայծառության մեծ գործին։

Շատ ցավեցինք իմանալով, որ Բարեգործական Միությունը զիջանելով Ձեր երկարատև թախանձանքներին, հարկադրված է եղել ընդունել Ձեր հրաժարականը Վարիչ-Տնօրենի պատասխանատու պաշտոնից, որ Դուք այնքան երկար տարիներ վարել եք մեծ եռանդով և մեծագույն երախտահատույցի արժանի արդյունքով պսակել։

Այս օրերս միայն և այն մասնավոր կերպով տեղեկացանք, որ նորերս լրացել է Ձեր ծննդյան 75-ամյակը և տոնվել, որից շուրջ հիսուն տարի նվիրված է եղել անկաշառ ազգային գործունեության, ի մասնավորի Հայկական Բարեգործական Միության, որն իր կազմակերպչական ու ֆինանսական կայունությամբ և արդյունավետ գործունեությամբ շատ է պարտական Ձեր շրջահայաց, կշռադատ և անկողմնակալ վարքագծին։

Սույն պատեհությունից օգտվելով ի խորոց սրտի աղոթում ենք Բարձրյալին՝ պարգևել Ձեզ և Ձեր հարազատներին արևշատություն և երջանկություն։

Մենք հավատացած ենք, որ Դուք, չնայած Ձեր պատկառելի տարիքին և առողջական անմխիթար վիճակին, չեք թողնի ազգային-հասարակական գործունեության ասպարեզը և կանեք առավելագույնը՝ պսակազարդելու համար Ձեր բազմամյա գործունեության իդեալները՝ Հայ Դատի և Հայ Ժողովրդի ազգային իդեալների լիակատար և վերջնական հաղթանակը։

Լիահույս ենք, որ Ձեր բոլոր հոգեկան առաքինությունները, գիտությունն ու փորձառությունը, հեղինակությունն ու բարի կամքը մեծագույնս կօգտագործեք ընդառաջելու և արձագանքելու նաև այն բոլոր խնդիրների լուծման, որոնք նշված են Հայոց Բարեգործական Ընդհանուր Միության պատուարժան նախագահ Տիար Արշակ Գարակեոզյանի անունով ուղարկածս գրության մեջ։

Միածնաէջ Սուրբ Տաճարիցս և նախամեծար Մայր Աթոռիցս հղում ենք Ձեզ Հայրապետական ողջույն և օրհնություն։

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ՝ ԳԵՎՈՐԳ Զ

Ի Ս-Ն դեկտեմբերի 1947 թ.
Ի Ս. Էջմիածին